



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 01.02.16 թ.
Ելք № 005

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք Ձեզ, որ չնայած հարկային ոլորտում իրավակիրառական գործընթացում առկա խնդիրների, հարկ վճարողները հաճախ ձեռնպահ են մնում ուղղակի դիմել և իրենց հարցադրումները ցանկանում են ներկայացնել հասարակական կազմակերպությունների միջոցով:

Այդ կապակցությամբ կից ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարին ուղղված հարկ վճարողի գրությունը և խնդրում ենք պարզաբանել բարձրացված հարցերին:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

Հարգելի պրն. Խաչատրյան,

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1. հոդվածի վերջին պարբերության համաձայն՝

«2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:

Ապահովագրական ընկերությունը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթների համաձայն՝ ապահովագրված անձի հետ պարտադիր կնքում է գրավոր ապահովագրության պայմանագիր(վկայագիր), որը բացի ապահովագրության օբյեկտի վերաբերյալ տեղեկություններից, պարունակում է նաև ՀՀ Կառավարության 25.08.1998թ.-ի թիվ՝ 525 որոշման կարգի 2-րդ կետով սահմանված պահանջները բավարարող տվյալները: Այսինքն, մեր կարծիքով ՀՀ Կառավարության 25.08.1998թ.-ի թիվ՝ 525 որոշմամբ հաստատված կարգի իմաստով ապահովագրության պայմանագիրն(վկայագիրն) ինքնին հանդիսանում է ապահովագրողի եկամուտները և ապահովադրի ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթուղթ:

Ապահովագրական ընկերությունը, ապահովագրավճարի գումարի անկանխիկ ստանալու պայմանի դեպքում, ապահովագրական պայմանագրին(վկայագրին) կից հավելվածով ապահովադրին է տրամադրում նաև պայմանագրով(վկայագրով) նախատեսված ապահովագրավճարի վճարման վերաբերյալ հաշիվ (այսուհետ՝ նաև վճարման հաշիվ), որում ներկայացվում է ապահովագրավճարի վճարման ժամանակացույցը, մասնավորապես՝ վճարման պարբերականությունը, հերթական վճարման մասը, ժամկետը և այլն:

Նշված իրավիճակում, ընկերության հետ համագործակցող որոշ կազմակերպություններ, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1. հոդվածի վերջին պարբերության դրույթի ուժի մեջ մտնելու հանգամանքը, պահանջում են, որպեսզի ընկերությունն ապահովագրական պայմանագրի(վկայագրի) հետ ներկայացվող վճարման հաշիվները դուրս գրի բացառապես էլեկտրոնային եղանակով, պատճառաբանելով, որ հարկային վարչարարության տեսանկյունից միայն այդ դեպքում վճարման հաշիվները կդիտվեն՝ որպես ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթուղթ:

Բացի այդ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից ապահովագրողի կողմից E-invoicing էլեկտրոնային համակարգով հաշիվների դուրս գրումը կհամարվի Ապահովագրական գաղտնիքի ապօրինի հրապարակում:

Հաշվի առնելով վերը նշված իրավիճակը, խնդրում ենք պարզաբանել.

- արդյոք «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1. հոդվածի վերջին պարբերության պահանջը տարածվում է նաև ապահովագրական պայմանագրերին(վկայագրերին) կից ներկայացվող վճարման հաշիվների վրա, թե ոչ,
- համարվում են արդյոք ապահովագրական պայմանագրերը(վկայագրերը) 25.08.1998թ.-ի թիվ՝ 525 որոշմամբ հաստատված կարգի իմաստով ծախսերը հիմնավորվող փաստաթղթեր, թե ոչ

Կանխավ շնորհակալություն